

**ԿՈՆՎԵՆՑԻՒ**  
ԳՈՐԾՈՂ ԲԱԱԿԱՆԵՐՈՒՄ ՎԻՐԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ  
ԲԱՐԵԼԱՎՎՈՒՄՆ

ՄԱՍԻՆ  
(1-ին մաս)

Ներքոստորագրյալները, այս դիվանագիտական համաժողովում ներկայացված կառավարությունների լիազորները, որը 1949 թվականի ապրիլի 21-ից մինչեւ օգոստոսի 12-ը ժնեւում նիստեր էր գումարել "Գործող բանակներում վիրավորների եւ հիվանդների վիճակի բարելավման մասին" 1929 թվականի հուլիսի 27-ի ժնեւի կոնվենցիան վերանայելու նպատակով, կնքեցին հետեւյալ համաձայնագիրը.

**Գլուխ 1**  
Ընդհանուր դրույթներ

**ՀՐԴՎԱԾ 1**  
Կոնվենցիայի պահպանումը

Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են ցանկացած հանգամանքներում պահպանել եւ ստիպել պահպանելու սույն Կոնվենցիան:

**ՀՐԴՎԱԾ 2**  
Կոնվենցիայի կիրառումը

Բացի այս որոշումներից, որոնք պետք է ուժի մեջ մտնեն դեռեւս խաղաղ ժամանակ, սույն Կոնվենցիան կկիրառվի հայտարարված պատերազմի կամ ցանկացած այլ գինված ընդհարման դեպքում, որը ծագում է երկու կամ մի քանի Բարձր պայմանավորվող կողմերի միջեւ, անգամ եթե դրանցից մեկը չի ընդունում պատերազմական վիճակը:

Կոնվենցիան կկիրառվի նաեւ Բարձր պայմանավորվող կողմի ամբողջ տարածքի կամ դրա մի մասի գրավման բոլոր դեպքերում, անգամ եթե այդ գրավումը ոչ մի գինված դիմադրության չի հանդիպի:

Եթե ընդհարման մեջ գտնվող տերություններից մեկը չի հանդիսանում սույն Կոնվենցիայի մասնակից, Կոնվենցիայի մասնակից տերություններն իրենց փոխհարաբերություններում, այնուամենայնիվ, կմնան նրանով կապված: Դրանից բացի, դրանք Կոնվենցիայով կապված կլինեն վերը նշված տերության վերաբերմամբ, եթե վերջինս ընդունում եւ կիրառում է Կոնվենցիայի դրույթները:

**ՀՐԴՎԱԾ 3**  
Միջազգային բնույթ չկրող ընդհարումները

Միջազգային բնույթ չկրող եւ Բարձր պայմանավորվող կողմերից մեկի տարածքում  
ծագող գինված ընդհարման դեպքում ընդհարման մեջ գտնվող յուրաքանչյուր կողմ

պարտավոր է առնվազն կիրառել հետեւյալ դրույթները.

1. Անձինք, որոնք անմիջականորեն չեն մասնակցում ռազմական գործողություններին, ներառյալ՝ գինված ուժերի կազմից այն անձինք, ովքեր գենըը

վայր են դրել, ինչպես նաև նրանք, ովքեր դադարել են ռազմական գործողություններին մասնակցել՝ հիվանդության, վիրավորվելու, ձերբակալվելու կամ

ցանկացած այլ պատճառով, պետք է բոլոր հանգամանքներում օգտվեն մարդասիրական

վերաբերմունքից՝ առանց ռասայի, մաշկի գույնի, կրոնի կամ հավատի, սերի, ծագման

կամ գույքային դրության կամ ցանկացած այլ համանման չափանիշների պատճառներով

որեւէ անսպաստ տարբերակման:

Այդ նպատակով վերը նշված անձանց նկատմամբ արգելվում են եւ մշտապես ու ամենուրեք կարգելվեն հետեւյալ գործողությունները.

ա) կյանքի եւ ֆիզիկական անձեռնմխելիության դեմ ուղղված ոտնձգությունը, մասնավորապես, բոլոր տեսակի սպանությունները, խեղումները, դաժան վերաբերմունքը, խոշտանգումները եւ տանջահարությունը,

բ) պատանդ վերցնելը,

գ) անձի արժանապատվության դեմ ուղղված ոտնձգությունը, մասնավորապես, վիրավորական եւ նվաստացուցիչ վերաբերմունքը,

դ) դատապարտումը եւ պատժի կիրառումը՝ առանց քաղաքակիրթ ազգերի կողմից

անհրաժեշտ ճանաչված դատական երաշխիքների առկայությամբ պատշաճ կերպով հիմնված

դատարանի կայացրած նախնական դատական որոշման:

2. Վիրավորներին եւ հիվանդներին կիավաքեն, եւ նրանց ցույց կտրվի օգնություն:

Որեւէ անկողմնակալ մարդասիրական կազմակերպություն, ինչպես, օրինակ, Կարմիր

խաչի միջազգային կոմիտեն է, կարող է իր ծառայություններն առաջարկել ընդհարման

մեջ գտնվող կողմերին:

Դրանից բացի, ընդհարման մեջ գտնվող կողմերը կձգտեն հատուկ համաձայնագրերի

միջոցով գործողության մեջ դնել սույն Կոնվենցիայի բոլոր մնացյալ դրույթները կամ դրանց մի մասը:

Նախորդ դրույթների կիրառումը չի կարող շոշափել ընդհարման մեջ գտնվող կողմերի իրավական կարգավիճակը:

#### ՀՐԴՎԱԾ 4

Կոնվենցիայի կիրառումը չեզոք տերությունների կողմից

Չեզոք պետությունները սույն Կոնվենցիայի դրույթները համանման ձեւով կկիրառեն այն վիրավորների եւ հիվանդների, ինչպես նաև բժշկական եւ հոգեւոր

անձնակազմի նկատմամբ, որոնք պատկանում են ընդհարման մեջ գտնվող կողմերի գինված ուժերին, եւ որոնք ընդունվել կամ ներկալվել են իրենց տարածքում, ինչպես նաև հավաքված մահացածների նկատմամբ:

### ՀՈԴՎԱԾ 5 Կիրառման տետողությունը

Սույն Կոնվենցիան կկիրառվի հակառակորդի ձեռքն ընկած հովանավորվող անձանց նկատմամբ՝ մինչեւ նրանց հայրենադարձության պահը:

### ՀՈԴՎԱԾ 6 Հատուկ համաձայնագրերը

Բացի 10, 15, 23, 28, 31, 36, 37 եւ 52 հոդվածներով հատկապես նախատեսված համաձայնագրերից, Բարձր պայմանավորվող կողմերը կարող են կնքել ուրիշ հատուկ

համաձայնագրեր որեւէ հարցի առթիվ, որը նրանք նպատակահարմար կհամարեն կարգավորել առանձին: Ոչ մի հատուկ համաձայնագիր չպետք է վեաս հասցնի հիվանդների եւ վիրավորների, ինչպես նաև բժշկական եւ հոգեւոր անձնակազմի՝ սույն Կոնվենցիայով սահմանված վիճակին, ոչ ել սահմանափակի այդ Կոնվենցիայով:

Նրանց տրամադրված իրավունքները:

Յիշվանդները եւ վիրավորները, ինչպես նաև բժշկական եւ հոգեւոր անձնակազմն

այդ համաձայնագրերի արտոնություններից կշարունակեն օգտվել այնքան ժամանակ,

քանի դեռ նրանց նկատմամբ կիրառելի կլինի Կոնվենցիան, բացի վերոհիշյալ կամ ավելի ուշ կնքված համաձայնագրերում հատուկ պարունակվող հակառակ դրույթների

կամ, հավասարապես, ընդհարման մեջ գտնվող այս կամ այն պետության կողմից նրանց

նկատմամբ առավել նպաստավոր միջոցառումներ կիրառելու դեպքերի:

### ՀՈԴՎԱԾ 7 Իրավունքների անօտարելիությունը

Յիշվանդները եւ վիրավորները, ինչպես նաև բժշկական եւ հոգեւոր անձնակազմը,

ոչ մի դեպքում չեն կարող մասնակիորեն կամ լիովին իրաժարվել նախորդ հոդվածում

նախատեսված այն իրավունքներից, որոնք նրանց համար ապահովում են սույն Կոնվենցիան կամ հատուկ համաձայնագրերը, եթե այդպիսիք գոյություն ունեն:

### ՀՈԴՎԱԾ 8 Հովանավոր տերությունները

Սույն Կոնվենցիան կկիրառվի այն հովանավոր տերությունների աջակցությամբ եւ

դրանց վերահսկողության ներքո, որոնց վրա է դրված ընդհարման մեջ գտնվող կողմերի շահերի պաշտպանությունը: Այդ նպատակով հովանավոր տերությունները կարող են, բացի իրենց դիվանագիտական կամ հյուպատոսական անձնակազմից, նշանակել պատվիրակներ իրենց սեփական քաղաքացիների կամ այլ չեզոք տերությունների քաղաքացիների թվից: Այդ պատվիրակների նշանակման համար պետք է ստացվի այն տերության համաձայնությունը, որին առընթեր նրանք պետք է կատարեն իրենց առաքելությունը:

Ընդհարման մեջ գտնվող կողմերը, առավելագույն հնարավորության սահմաններում,  
կոյուրացնեն հովանավոր տերությունների ներկայացուցիչների կամ  
պատվիրակների  
աշխատանքը:

Հովանավոր տերությունների ներկայացուցիչները կամ պատվիրակները ոչ մի դեպքում չպետք է դուրս գան իրենց այն առաքելության շրջանակներից, որը սահմանված է սույն Կոնվենցիայով. նրանք, մասնավորապես, պետք է ուշադրության առնեն այն պետության անվտանգության անհետաձգելի կարիքները, որին առընթեր  
կատարում են իրենց գործառույթները: Միայն ռազմական անհետաձգելի պահանջները  
կարող են տալ նրանց գործողությունը ժամանակավորապես եւ բացառության կարգով  
սահմանափակելու իրավունք:

### ՀՈՂՎԱԾ 9

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի գործունեությունը

Սույն Կոնվենցիայի դրույթները խոչընդոտ չեն հանդիսանում այն մարդասիրական գործողությունների համար, որոնք Կարմիր խաչի միջազգային կոմիտեն կամ ցանկացած այլ անկողմնակալ մարդասիրական կազմակերպություն, ընդհարման մեջ գտնվող շահագրգիռ կողմերի համաձայնությամբ, կծեռնարկեն վիրավորների եւ հիվանդների, ինչպես նաև բժշկական եւ հոգեւոր անձնակազմի պաշտպանության եւ նրանց օգնություն ցույց տալու համար:

### ՀՈՂՎԱԾ 10

Հովանավոր տերությունների փոխարինորդները

Բարձր պայմանավորվող կողմերը ցանկացած ժամանակ կարող են համաձայնության գալ այն մասին, որպեսզի անկողմնակալության եւ արդյունավետության լիակատար երաշխիք ներկայացնող որեւէ կազմակերպության վստահեն հովանավոր տերությունների վրա սույն Կոնվենցիայով դրվող պարտականությունները:

Եթե վիրավորների եւ հիվանդների կամ բժշկական եւ հոգեւոր անձնակազմի վրա չի

տարածվում կամ ինչ-որ պատճառով դադարել է տարածվել որեւէ հովանավոր տերության

կամ առաջին պարբերության մեջ նախատեսված կազմակերպության գործունեությունը,

ապա այն տերությունը, որի իշխանության տակ են գտնվում հովանավորվող անձինք,

պետք է դիմի կամ որեւէ չեզոք պետության կամ այդպիսի կազմակերպության՝ ինսդրելով

ստանձնել այն գործառույթները, որոնք ընդհարման մեջ գտնվող կողմերի նշանակած

հովանավոր տերությունների կողմից կատարվում են սույն Կոնվենցիային համապատասխան:

Եթե չի հաջողվում նշված ձեւով հովանավորություն իրականացնել, ապա տերությունը, որի իշխանության տակ են գտնվում հովանավորվող անձինք, պետք է

ինդրանքով դիմի որեւէ մարդասիրական կազմակերպության, ինչպիսին է, օրինակ,

Կարմիր խաչի միջազգային կոմիտեն՝ կատարելու սույն Կոնվենցիայով հովանավոր

տերությունների վրա դրված մարդասիրական պարտականությունները, կամ, սույն

հոդվածի դրույթների հաշվառմամբ, ընդունի այդպիսի կազմակերպության՝ ծառայություն ցուցաբերելու առաջարկությունը:

Յուրաքանչյուր չեզոք տերություն կամ յուրաքանչյուր կազմակերպություն, որը հրավիրվել է շահագրգիռ տերության կողմից, կամ որն իրեն առաջարկել է վերը նշված

նպատակների համար, պետք է գործի ընդհարման մեջ գտնվող այն կողմի նկատմամբ

պատասխանատվության գիտակցումով, որի մոտ են գտնվում սույն Կոնվենցիայի պաշտպանությունից օգտվող անձինք, եւ տրամադրի բավարար երաշխիքներ, որ ինքն ի

վիճակի է ստանձնել համապատասխան գործառույթներ եւ դրանք կատարել անաշար

կերպով:

Նախորդ դրույթները չեն կարող խախտվել տերությունների միջեւ կնքված հատուկ

համաձայնագրերով, եթե այդ տերություններից մեկը, պատերազմական իրադրության

բերումով, անգամ ժամանակավորապես, սահմանափակված է մյուս տերության կամ դրա

դաշնակիցների հետ ազատորեն բանակցություններ վարելու իր հևարավորություններում, հատկապես այն դեպքերում, երբ տվյալ տերության ամբողջ

տարածքը կամ դրա զգալի մասը գրավված է:

Ամեն անգամ, երբ սույն Կոնվենցիայի մեջ հիշատակվում է հովանավոր տերություն, այդ անվանումը սույն հոդվածի համաձայն նշանակում է նաեւ դրան փոխարինող կազմակերպություն:

## Տարածայնությունների կարգավորման գործընթացը

Բոլոր դեպքերում, երբ նրանք դա օգտակար կհամարեն ի շահ հովանավորվող անձանց, մասնավորապես, սույն Կոնվենցիայի դրույթների կիրառման կամ մեկնաբանման

առթիվ ընդհարման մեջ գտնվող կողմերի միջեւ տարածայնությունների ծագման դեպքում, հովանավոր տերություններն իրենց բարի ծառայությունները կմատուցեն՝

տարածայնությունները կարգավորելու նպատակով:

Այդ նպատակով, հովանավոր տերություններից յուրաքանչյուրը, կողմերից որեւէ

մեկի խնդրանքով կամ սեփական նախաձեռնությամբ, կարող է ընդհարման մեջ գտնվող

կողմերին առաջարկել պատշաճ կերպով ընտրված հնարավոր չեզոք տարածքում կազմակերպելու նրանց ներկայացուցիչների եւ, մասնավորապես, այն իշխանությունների ներկայացուցիչների խորհրդակցություն, որոնց վրա է դրված վիրավորների եւ հիվանդների, ինչպես նաև բժշկական եւ հոգեւոր անձնակազմի վիճակի և կատարմամբ հոգատարությունը: Ընդհարման մեջ գտնվող կողմերը պարտավոր են

ընթացք տալ այն առաջարկություններին, որոնք այդ առումով նրանց կարգեն: Վսիրաժեշտության դեպքում հովանավոր տերությունները կարող են ընդհարման մեջ

գտնվող կողմերի հավանությանը ներկայացնել չեզոք տերությանը պատկանող կամ

կարմիր խաչի միջազգային կոմիտեի կողմից որպես պատվիրակ ուղարկված անձին, որը

կիրավիրվի մասնակցելու այդ խորհրդակցությանը:

### Գլուխ 2 Վիրավորները եւ հիվանդները

#### ՀՐԴՎԱԾ 12

#### Պաշտպանությունը, վարվելակերպը եւ բուժօգնությունը

Զիսված ուժերի անձնակազմը եւ հաջորդ հոդվածում նշված այլ անձինք՝ վիրավորվելու կամ հիվանդանալու դեպքում, պետք է օգտվեն հովանավորությունից եւ

պաշտպանությունից՝ բոլոր հանգամանքներում:

Ընդհարման մեջ գտնվող այն կողմը, որի իշխանության տակ կհայտնվեն նրանք,

նրանց համար կապահովի մարդասիրական վարվելակերպ եւ խնամք՝ առանց այնպիսի

խորականության, ինչպիսիք են՝ սեղը, ռասան, ազգությունը, կրոնը, քաղաքական համոզմունքները կամ մյուս համանման չափանիշները: Խստորեն արգելվում է ոտևածությունը նրանց կյանքի եւ անձի հանդեպ եւ, մասնավորապես, արգելվում է նրանց վերջ տալ կամ կոտորել, ենթարկել խոշտանգումների, նրանց վրա կենսաբանական

փորձեր կատարել, միտումնավոր կերպով թողնել առանց բուժօգնության եւ խնամքի,

կանխամտածված կերպով պայմաններ ստեղծել նրանց վարակման համար:

Բուժօգնություն ցուցաբերելու հերթականության մեջ առաջնահերթություն

թույլատրվում է միայն անհետաձգելի բնույթի բժշկական պատճառներով:

Կանաց նկատմամբ կվարվեն նրանց սեռին պատշաճ առանձնահատուկ հարգանքով:

Ընդհարման մեջ գտնվող կողմը, որն ստիպված է վիրավորներին եւ հիվանդներին

թողնել հակառակորդին, նրանց հետ միասին, որքան հնարավորություն կտան ռազմական

պահանջները, կթողնի իր բուժանձնակազմի եւ հանդերձանքի մի մասը՝ նրանց խնամքին

աշակցելու համար:

### ՀՈԴՎԱԾ 13 Հովանավորվող անձինք

Սույն Կոնվենցիան կվիրառվի հետեւյալ կատեգորիաներին պատկանող վիրավորների

եւ հիվանդների նկատմամբ.

1. Ընդհարման մեջ գտնվող կողմի գինված ուժերի անձնակազմը, ինչպես նաև

այդ

գինված ուժերի կազմի մեջ մտնող աշխարհագորային եւ կամավորական ջոկատների

անձնակազմը:

2. Մյուս աշխարհագորայինների եւ կամավորական ջոկատների անձնակազմը, ներառյալ՝ դիմադրության կազմակերպված այն շարժումների անձնակազմը,

որոնք

պատկանում են ընդհարման մեջ գտնվող կողմին եւ գործում են իրենց սեփական տարածքում կամ դրանից դուրս, եթե անգամ այդ տարածքը գրավված է, եթե այդ աշխարհագորայինները եւ կամավորական ջոկատները, ներառյալ՝ դիմադրության կազմակերպված շարժումները, համապատասխանում են ներքոհիշյալ պայմաններին.

ա) Ենթականների համար ունեն պատասխանատու ղեկավար անձ,

բ) ունեն որոշակի եւ հեռվից պարզորոշ երեւացող տարբերանշան,

գ) գենքը կրում են բացեկիցաց,

դ) իրենց գործողություններում պահպանում են պատերազմի օրենքներն ու սովորույթները:

3. Այս կանոնավոր գինված ուժերի անձնակազմը, որն իրեն համարում է այն կառավարության կամ իշխանության ենթակայության տակ, որը չի ճանաչվել գերության

մեջ պահող տերության կողմից:

4. Չինված ուժերի հետեւից ընթացող, բայց անմիջականորեն դրանց կազմի մեջ չմտնող անձինք, ինչպես, օրինակ, ռազմական ինքնաթիռների անձնակազմի մեջ մտնող

քաղաքացիական անձինք, գինվորական թղթակիցները, մատակարարները, աշխատանքային

խմբերի եւ ծառայությունների անձնակազմը, որոնց վրա դրված է գինված ուժերի կենցաղային սպասարկումը, պայմանով, որ նրանք դրա թույլտվությունը ստացել են

այն գինված ուժերի կողմից, որոնց նրանք ուղեկցում են:

5. Կոեւտրական նավատորմի նավերի անձնակազմերի անդամները, ներառյալ՝ նավապետները, նավատարներն ու նավի փոքրավորները, եւ ընդհարման մեջ գտնվող

կողմերի քաղաքացիական ավիացիայի այն անձնակազմերի անդամները, որոնք միջազգային

իրավունքի այլ դրույթների համաձայն չեն օգտվում առավել արտոնյալ ռեժիմից:

6. Զգրավված տարածքի բնակչությունը, որը հակառակորդի մոտենալուն համեմատ՝

տարերայնորեն գենք է վերցնում պայքարելու ներխուժող զորքերի դեմ, բայց դեռ չի

հասցել ձեւավորվել որպես կանոնավոր զորք, եթե նա գենքը կրում է բացեիրաց եւ

պահպանում պատերազմի օրենքներն ու սովորույթները:

### ՀՈԴՎԱԾ 14 Կարգավիճակը

Հոդված 12-ի դրույթները հաշվի առնելով՝ պատերազմող կողմի՝ հակառակորդի իշխանության տակ հայտնաված վիրավորները եւ հիվանդները կիամարվեն ռազմագերիներ,

եւ նրանց նկատմամբ կիրառվեն ռազմագերիներին վերաբերող միջազգային իրավունքի նորմերը:

### ՀՈԴՎԱԾ 15 Վիրավորների որոնումը: Տարահանումը

Ամեն անգամ, եւ հատկապես մարտերից հետո, ընդհարման մեջ գտնվող կողմերն

անմիջապես բոլոր հևարավոր միջոցները կձեռնարկեն, որպեսզի որոնեն եւ հավաքեն

վիրավորներին եւ հիվանդներին եւ նրանց պաշտպանեն կողոպուտից եւ անվայելուց

վերաբերմունքից, նրանց համար ապահովեն խնամք, ինչպես նաև՝ որպեսզի որոնեն

մահացածներին եւ նրանց պատսպարեն կողոպտելուց:

Ամեն անգամ, երբ թույլ տան հանգամանքները, կկնքվեն գիւղադադարի կամ հրադադարի մասին համաձայնագրեր, կամ տեղական համաձայնագրեր, որպեսզի թույլ

տրվի հավաքել եւ տեղափոխել մարտի դաշտում մնացած վիրավորներին, ինչպես նաև

կատարել վիրավորների փոխանակում:

Ընդհարման մեջ գտնվող կողմերի միջեւ կարող են նաև կնքվել համաձայնագրեր՝

պաշարված կամ շրջապատված գոտուց վիրավորներին եւ հիվանդներին տարահանելու կամ

փոխանակելու, եւ այդ գոտի բժշկական եւ հոգեւոր անձնակազմ եւ գույք ներս թողնելու մասին:

### ՀՈԴՎԱԾ 16 Տվյալների գրանցումը եւ հաղորդումը

Ընդհարման մեջ գտնվող կողմերը պետք է հևարավոր ամենակարճ ժամկետում գրանցեն հակառակորդ կողմի՝ իրենց ձեռքն ընկած վիրավորների, հիվանդների եւ

մահացածների ինքնությունը պարզելուն նպաստող բոլոր տվյալները: Այդ տեղեկությունները պետք է, ըստ հնարավորին, արտացոլեն հետեւյալ տվյալները.

ա) տերությունը, որին պատկանում է տվյալ անձը,

բ) զիսվորական կամ անձնական համարը,

գ) ազգանունը,

դ) անունը կամ անունները,

ե) ծննդյան թիվը,

զ) անձնական վկայականի մեջ կամ ճանաչման մեղալիոնի վրա նշված մյուս

բոլոր

տեղեկությունները,

ե) գերի ընկերու կամ մահվան թվականը եւ տեղը,

ը) վերաբորվելուն, հիվանդությանը կամ մահվան պատճառներին վերաբերող տեղեկությունները:

Վերը հիշատակված տվյալները պետք է, ըստ հնարավորին, արագորեն հասցեն

"Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին" 1949 թվականի օգոստոսի 12-ի ժնելի

կոնվենցիայի 122 հոդվածում նախատեսված տեղեկատու բյուրոյի գիտությանը, որը

հովանափոր տերության եւ ռազմագերիների գործերի կենտրոնական գործակալության

միջնորդությամբ, այդ տեղեկությունները կիանձնի այն տերությանը, որին պատկանում

է այդ անձը:

Ընդհարման մեջ գտնվող կողմերը պետք է պատրաստեն եւ այդ նույն բյուրոյի միջնորդությամբ միմյանց ուղարկեն մահվան վկայականները կամ մահացածների՝ հարկ

եղածին պես հաստատված ցուցակները: Նրանք կիավաքեն եւ նույն բյուրոյի միջնորդությամբ միմյանց կիանձնեն կրկնակի ճանաչման մեղալիոնի կեսը,

կտակները

եւ մահացածի ընտանիքի համար նշանակություն ունեցող այլ փաստաթղթերը, դրամը եւ

առհասարակ մահացածի մոտ գտնված բոլոր այն առարկաները, որոնք ունեն օբյեկտիվ

կամ սուբյեկտիվ արժեք: Այդ, ինչպես նաև չճանաչված իրերը, կուղարկվեն կնքված

փաթեթներով, որոնց կիավելվեն դրանց մահացած տերերի ինքնությունը պարզելու

համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները բովանդակող հայտարարությունը եւ

փաթեթների պարունակության լրիվ ցանկը:

### ՀՈԴՎԱԾ 17

Վերաբերմունքը մահացածների նկատմամբ: Գերեզմանների ծառայությունը

Ընդհարման մեջ գտնվող կողմերը կձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի մահացածներին հողին հանձնելը կամ նրանց այրումը տեղի ունենա, որքան

հնարավոր է, անհատապես եւ, որպեսզի դրան նախորդի աճյունների ուշադիր եւ, եթե

հնարավոր է, բժշկական գնություն՝ մահվան արձանագրման, ինքնության հաստատման  
եւ այդ մասին հնարավոր հաշվետվության նպատակով: Կրկնակի ճանաչման մեղալիոնի  
կեսը կամ ճանաչման բուն մեղալիոնը, եթե այս սովորական մեղալիոն է, պետք է մաս  
հանգուցյալի վրա:

Դիակները կայրվեն միայն այս դեպքում, եթե դա թելադրված է սանհիտարական բնույթի ստիպողական նկատառումներով կամ մահացածների կրոնի հետ կապված

Նկատառումներով: Այրման դեպքում՝ այդ մասին մասրամասն, այրման պատճառները ցույց տալով, պետք է նշվի մահվան մասին փաստաթղթում կամ մահացածների հավաստված ցուցակում:

Դրանից բացի, ընդհարման մեջ գտնվող կողմերը պետք է հետեւեն, որպեսզի մահացածները թաղվեն պատվով եւ, եթե հնարավոր է, այն կրոնի ծիսակատարության համաձայն, որին նրանք պատկանում են, որպեսզի գերեզմանները հարգվեն, հնարավորության սահմաններում ի մի բերվեն ըստ մահացածների ազգության, պահպանվեն հարկ եղածին պես եւ նշվեն այն ձեւով, որպեսզի միշտ հնարավոր լինի

դրանք գտնել: Այդ նպատակով, եւ ռազմական գործողությունների սկզբից, կողմերը պետք է կազմակերպեն գերեզմանների պաշտոնական ծառայություն, որպեսզի հնարավոր

դարձնեն ապագայում դիակի արտաշիրմումը, ապահովեն, ինչպիսին էլ որ լինի գերեզմանների գտնվելու վայրը, դիակների ճանաչումը եւ նրանց հնարավոր ուղարկումը հայրենիք: Այդ որոշումները տարածվում են նաեւ մոխրի վրա, որը գերեզմանների ծառայության կողմից կպահվի այնքան ժամանակ, քանի դեռ դրա վերաբերյալ մահացածների հայրենիքը համապատասխան որոշում չի կայացրել:

Եթե որ թույլ տան հանգամանքները, եւ ամենաուշը՝ ռազմական գործողությունների ավարտին, այդ ծառայությունները 16 հոդվածի երկրորդ պարբերության մեջ հիշատակված տեղեկատու բյուրոյի միջնորդությամբ կփոխանակեն ցուցակներ, որոնցում կնշվեն գերեզմանների գտնվելու ճշգրիտ վայրը եւ դրանց նշանները, ինչպես նաեւ դրանցում ամփոփված հանգուցյալների մասին տվյալներ:

## ՀՈՇՎԱԾ 18

### Բնակչության դերը

Զինվորական իշխանությունները կարող են կոչով դիմել տեղական քնակիչների մարդասիրությանը՝ կամավոր հավաքելու եւ իրենց հսկողության ներքո խնամելու վիրավորներին եւ հիվանդներին, այդ կոչին արձագանքած անձանց տրամադրելով անհրաժեշտ հովանավորություն եւ արտոնություններ: Այն դեպքում, եթե հակառակորդ կողմը հաստատի կամ վերականգնի իր վերահսկողությունը տվյալ շրջանների նկատմամբ,

ապա ևա այդ անձանց կտրամադրի այդ նույն հովանավորությունը եւ նույն արտոնությունները:

Զինվորական իշխանությունները բնակչությանը եւ բարեգործական ընկերություններին պետք է թույլատրեն, նույնիսկ ներխուժման շրջաններում եւ գրավյալ շրջաններում իրենց սեփական նախաձեռնությամբ հավաքելու եւ խնամելու վիրավորներին եւ հիվանդներին՝ անկախ նրանց ազգությունից: Զաղաքացիական բնակչությունն այդ հիվանդներին եւ վիրավորներին պետք է հարգանքով վերաբերվի եւ, մասնավորապես, նրանց նկատմամբ չկիրարի բռնության որեւէ գործողություն: Ոչ ոք չի կարող հետապնդվել կամ դատվել վիրավորների եւ հիվանդների նկատմամբ խնամք ցուցաբերելու համար:

Սույն հոդվածի դրույթները գրավող տերությանը չեն ազատում վիրավորների եւ հիվանդների վերաբերմամբ սանհիտարական եւ բարոյական բնույթի հարցերում նրա վրա դրված պարտականություններից:

### Գլուխ 3 Սանհիտարական կազմավորումները եւ հիմնարկները

**ՀՐՈՂՎԱԾ 19**  
**Յովանավորությունը եւ պաշտպանությունը**

Բժշկական ծառայության մշտական սանհիտարական հիմնարկները եւ շարժական սանհիտարական կազմավորումները ոչ մի հանգամանքներում չեն կարող ենթարկվել հարձակման, այլ մշտապես կօգտվեն ընդհարման մեջ գտնվող կողմերի հովանավորությունից եւ պաշտպանությունից: Ընկելով հակառակորդ կողմի ձեռքը՝ նրանք կարող են շարունակել գործել այնքան ժամանակ, քանի դեռ նրանց զավթած տերությունն ինքը չի ապահովի այդ հիմնարկներում եւ կազմավորումներում գտնվող վիրավորների եւ հիվանդների անհրաժեշտ խնամքը: Յամապատասխան իշխանությունները հոգ կտանեն այս մասին, որպեսզի վերը նշված սանհիտարական հիմնարկները եւ կազմավորումները հևարավորության սահմաններում տեղակորություն այնպես, որպեսզի ռազմական օբյեկտների վրա հարձակման դեպքում դրանք վտանգի չենթարկվեն:

### ՀՐՈՂՎԱԾ 20 Նավ-հոսպիտալների պաշտպանությունը

Նավ-հոսպիտալները, որոնք գտնվում են "Ծովում գինված ուժերի կազմից վիրավորների, հիվանդների եւ նավաբեկյալների վիճակի բարելավման մասին" 1949 թվականի օգոստոսի 12-ի ժնեւի կոնվենցիայի հովանավորության տակ, չպետք է հարձակման ենթարկվեն ցամաքից:

### ՀՈԴՎԱԾ 21

Հիմնարկների եւ կազմավորումների հովանավորության դադարեցումը

Հովանավորությունը, որի իրավունքն ունեն բժշկական ծառայության մշտական հիմնարկները եւ շարժական սանհտարական կազմավորումները, կարող է դադարել միայն  
այն դեպքում, եթե դրանք, բացի իրենց մարդասիրական պարտականություններից,  
օգտագործվեն հակառակորդի դեմ ուղղված ռազմական գործողություններ կատարելու  
համար: Հովանավորությունը, սակայն, կդադարի համապատասխան նախազգուշացումից հետո, որը բոլոր անհրաժեշտ դեպքերում խելամիտ ժամկետ է սահմանում, եւ այն բանից հետո, երբ այդ նախազգուշացումն արդյունք չի տվել:

### ՀՈԴՎԱԾ 22

Հանգամանքները, որոնք պաշտպանության դադարեցման հիմք չեն կարող լինել

Սանհտարական կազմավորման կամ հիմնարկի՝ 19 հոդվածով սահմանված հովանավորությունից գրկող հանգամանքներ չեն դիտվի.

1) Եթե սանհտարական կազմավորման կամ հիմնարկի անձնակազմը գինված է եւ իր գենքից օգտվում է ինքնապաշտպանության կամ իր վիրավորների եւ հիվանդների պաշտպանության համար,  
2) Եթե գինված սանհտարների բացակայության պատճառով կազմավորումը կամ հիմնարկը պահպանվում է ուղեկալների, ժամապահների կամ պահակախմբի օգնությամբ,

3) Եթե կազմավորումում կամ հիմնարկում գտնվեն ձեռքի գենք եւ գինամթերք, որոնք վերցվել են վիրավորներից եւ հիվանդներից եւ դեռ չեն հանձնվել ըստ պատկանելության,

4) Եթե կազմավորումում կամ հիմնարկում առկա են անասնաբուժական ծառայության

անձնակազմ եւ գույք, որոնք չեն հանդիսանում դրանց անբաժանելի մասը,

5) Եթե սանհտարական կազմավորումների ու հիմնարկների եւ դրանց անձնակազմի

մարդասիրական գործունեությունը տարածվում է քաղաքացիական անձ հանդիսացող

վիրավորների եւ հիվանդների վրա:

### ՀՈԴՎԱԾ 23

Սանհտարական գոտիները եւ վայրերը

Խաղաղ ժամանակ Բարձր պայմանավորվող կողմերը, իսկ ռազմական գործողություններ սկսելուց հետո՝ ընդհարման մեջ գտնվող կողմերը կարող են իրենց

սեփական տարածքում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ գրավյալ տարածքում ստեղծել

սանհտարական գոտիներ եւ վայրեր՝ կազմակերպված այնպես, որպեսզի պատերազմի

գործողություններից պաշտպանվեն վիրավորները եւ հիվանդները, ինչպես նաեւ այն

անձնակազմը, որի վրա են դրված այդ գոտիների եւ վայրերի կազմակերպումն ու կառավարումը եւ այն անձանց խնամքը, որոնք կկենտրոնացվեն այնտեղ:

Շազմական գործողությունների սկզբում եւ դրանց ընթացքում շահագրգիռ կողմերը

կարող են կնքել համաձայնագրեր՝ իրենց կողմից ստեղծված սանհիտարական գոտիների եւ

վայրերի փոխադարձ ճանաչման մասին: Այդ նպատակով նրանք կարող են կիրառել սույն

Կոնվենցիային կից համաձայնագրի նախագծում նախատեսվող դրույթները՝ նրանում

կատարելով փոփոխություններ, որոնք անհրաժեշտ կիամարեն:

Յովանավոր տերությունները եւ Կարմիր խաչի միջազգային կոմիտեն պետք է բարի

ծառայություններ մատուցեն՝ այդ սանհիտարական գոտիների եւ վայրերի ստեղծումը եւ

ճանաչումը ոյուրացնելու համար:

#### Գլուխ 4 Անձնակազմը

##### ՀՐԴՎԱԾ 24

##### Մշտական անձնակազմի հովանավորությունը

Սանհիտարական անձնակազմը, որը նախատեսված է բացառապես վիրավորներին եւ

հիվանդներին գտնելու եւ հավաքելու, տեղափոխելու եւ բուժելու կամ հիվանդությունները կանխարգելելու համար, եւ որը պատկանում է բացառապես սանհիտարական կազմավորումների եւ հիմնարկների վարչությանը, ինչպես նաև գինված

ուժերին առընթեր հոգեւորականները, հարգանք եւ հովանավորություն կվայելեն բոլոր

հանգամանքներում:

##### ՀՐԴՎԱԾ 25

##### Ժամանակավոր անձնակազմի հովանավորությունը

Զինված ուժերի այն անձնակազմը, որը հատկապես պատրաստվել է անհրաժեշտության

դեպքում որպես օժանդակ սանհիտարներ աշխատելու, կամ վիրավորներին ու հիվանդներին

որոնելու, հավաքելու, տեղափոխելու համար՝ փոխադրողներ օգտագործվելու նպատակով,

կամ վիրավորներին եւ հիվանդներին բուժելու համար, նույնպես ենթակա է հարգանքի

ու հովանավորության, եթե նա այդ պարտականությունները կատարում է հակառակորդի

հետ շփման մեջ մտնելու կամ նրա իշխանության տակ հայտնվելու պահից:

##### ՀՐԴՎԱԾ 26

## Օգնության ընկերությունների անձնակազմը

24 հոդվածում հիշատակված անձնակազմին հավասարեցվում է իր կառավարության կողմից հարկ եղածին պես ճանաչված եւ լիազորված Կարմիր խաչի ազգային ընկերությունների եւ օգնության մյուս կամավոր ընկերությունների անձնակազմը, որն օգտագործվում է նույն գործառույթների համար, ինչ նշված հոդվածում հիշատակված անձնակազմի գործառույթներն են, պայմանով, որ այդ ընկերությունների

անձնակազմը ենթարկվի պատերազմի օրենքներին եւ կարգուկանոնին:

Յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմ խաղաղ ժամանակ, կամ ռազմական գործողությունների սկզբում, կամ դրանց ընթացքում, բայց, համենայն դեպս, հիշատակված ընկերությունների փաստական գործունեությունն սկսելուց առաջ, կհայտնի մյուս կողմին այն ընկերությունների անվանումը, որոնց իր պատասխանատվության ներքո լիազորել է աշակցություն ցույց տալու իր գինված ուժերին առընթեր պաշտոնական սանհիտարական ծառայությանը:

### ՀՐԴՎԱԾ 27

#### Չեզոք երկրների ընկերությունները

Չեզոք երկրի ճանաչված ընկերությունն իր անձնակազմով եւ սանհիտարական կազմավորումներով կարող է ընդհարման մեջ գտնվող կողմին աշակցություն ցույց տալ

միայն իր կառավարության նախնական համաձայնությամբ եւ ընդհարման մեջ գտնվող

կողմի թույլտվությամբ: Այդ անձնակազմը եւ կազմավորումները կդրվեն ընդհարման

մեջ գտնվող տվյալ կողմի վերահսկողության տակ:

Չեզոք կառավարությունն այդ համաձայնության մասին հայտնում է այդ օգնությունն ընդունող պետության հակառակորդ կողմին: Աշակցությունն ընդունած

ընդհարման մեջ գտնվող կողմը պարտավոր է այդ մասին հակառակորդ կողմին ծանուցել

նախքան այդ աշակցությունից օգտվելը:

Այդ աշակցությունը ոչ մի պարագայում չպետք է դիտվի որպես միջամտություն ընդհարմանը:

Առաջին պարբերության մեջ հիշատակված անձնակազմը պետք է 40 հոդվածով նախատեսված անձնական վկայականներով հարկ եղածին պես ապահովված լինի նախքան

կթողնի այն չեզոք երկիրը, որին պատկանում է:

### ՀՐԴՎԱԾ 28

#### Յակառակորդ կողմից պահված անձնակազմը

24 եւ 26 հոդվածներում թվարկված անձնակազմը, հակառակորդ կողմի իշխանության

տակ ընկնելիս, կարող է պահվել միայն այն չափով, որը կապահանջեն ռազմագերիների

սանհիտարական վիճակը, իոգեւոր պահանջմունքները եւ նրանց թվաքանակը:

Նման կերպ պահված անձնակազմին պատկանող անձինք չեն համարվի ռազմագերիներ:

Սակայն նրանք կօգտվեն, առնվազն, "Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին" 1949

թվականի օգոստոսի 12-ի ժնեւի կոնվենցիայի բոլոր դրույթների արտոնություններից:

Իրենց պահող տերության ռազմական օրենքների եւ կարգադրությունների շրջանակներում եւ այդ երկրի իրավասու ծառայության ղեկավարությամբ, ինչպես նաև

իրենց մասնագիտական էթիկային համապատասխան, նրանք կշարունակեն իրականացնել

իրենց սանհիտարական եւ հոգեւոր պարտականությունները գերադասելիորեն հօգուտ այն

գինված ուժերի կազմի ռազմագերիների, որոնց պատկանում են հենց իրենք: Իրենց

սանհիտարական եւ հոգեւոր պարտականությունների կատարման նպատակով նրանք կօգտվեն,

դրանից զատ, հետեւյալ արտոնություններից:

ա) Նրանց կրույլատրվի պարբերաբար այցելել ճամբարից դուրս տեղավորված աշխատախմբերում կամ հոսպիտալներում գտնվող ռազմագերիներին:

Գերության մեջ

պահող տերությունն այդ նպատակով նրանց կտրամադրի տրանսպորտի անհրաժեշտ

միջոցներ:

բ) Յուրաքանչյուր ճամբարում կոչումով եւ ստաժով ավագ բժիշկը ճամբարի գինվորական իշխանությունների առջեւ պատասխանատվություն կրի այն ամենի համար,

որը վերաբերում է պահվող սանհիտարական անձնակազմի մասնագիտական գործունեությանը: Այդ նպատակով ընդհարման մեջ գտնվող կողմերը ռազմական գործողությունների սկզբից կպայմանավորվեն իրենց բուժանձնակազմի, այդ թվում եւ

26 հոդվածում հիշատակված ընկերությունների անձնակազմի կոչումների համապատասխանության վերաբերյալ: Իրենց մասնագիտական պարտականությունների բոլոր

հարցերով այդ բժիշկը, ինչպես նաև հոգեւորականները ուղղակի մուտք կունենան ճամբարի իրավասու իշխանությունների մոտ: Վերջիններս նրանց կտրամադրեն անհրաժեշտ հնարավորություններ այդ հարցերով գրագրություն վարելու համար:

գ) Թեեւ պահված անձնակազմը կենթարկվի այն ճամբարի ներքին կարգապահությանը,

որտեղ նա գտնվում է, սակայն չի կարելի նրան ստիպել կատարելու աշխատանք, որը

կապված չէ նրա բժշկական կամ հոգեւոր պարտականությունների հետ:

Ռազմական գործողությունների ժամանակ ընդհարման մեջ գտնվող կողմերը կպայմանավորվեն պահված անձնակազմի հնարավոր փոփոխման վերաբերյալ եւ կսահմանեն

այդ փոփոխման կարգը:

Նախորդ դրույթներից եւ ոչ մեկը գերության մեջ պահող տերությանը չի ազատում

այն պարտականություններից, որոնք դրված են նրա վրա ռազմագերիների սանհիտարական

եւ հոգեւոր կարիքների բավարարման բնագավառում:

### ՀՐԴՎԱԾ 29

Ժամանակավոր անձնակազմի վիճակը

25 հոդվածում նշված անձնակազմի մեջ մտնող անձինք, հայտնվելով հակառակորդի իշխանության տակ, կիամարվեն ռազմագերիներ, սակայն անհրաժեշտության սահմաններում, կօգտագործվեն սանհտարական պարտականություններ կատարելու համար:

### ՀՐԴՎԱԾ 30

Սանհտարական եւ հրգեւոր անձնակազմի վերադարձը

Անձնակազմի այն անդամները, որոնց պահելը 28 հոդվածի դրույթների տեսակետից անհրաժեշտ չի համարվում, կվերադարձվեն ընդհարման մեջ գտնվող այն կողմին, որին նրանք պատկանում են, իենց որ ուղի բացվի նրանց վերադարձի համար, եւ իենց որ

ռազմական դրությունը դա թույլ տա:

Իրենց վերադարձին սպասելու ընթացքում նրանք չեն համարվի ռազմագերիներ, սակայն կօգտվեն, այնուամենայնիվ, առևվազն այն առավելություններից, որոնք նախատեսված են "Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին" 1949 թվականի օգոստոսից

12-ի ժների կոնվենցիայի դրույթներով: Նրանք կշարունակեն կատարել իրենց պարտականությունները հակառակորդ կողմի դեկավարությամբ եւ կօգտագործվեն

հիմնականում ընդհարման մեջ գտնվող այն կողմի վիրավորներին եւ հիվանդներին

ինամելու համար, որին իրենք պատկանում են:

Մեկնելիս նրանք իրենց հետ կվերցնեն իրենց պատկանող իրերը, անձնական գույքը, արժեքավոր առարկաները եւ գործիքները:

### ՀՐԴՎԱԾ 31

Վերադարձման ենթակա անձնակազմի ընտրությունը

30 հոդվածի համապատասխան, ընդհարման մեջ գտնվող կողմին վերադարձման ենթակա անձնակազմի ընտրությունը պետք է կատարվի ռասայի, կրոնի կամ քաղաքական համոզմունքների հետ կապված որեւէ նկատառումից անկախ, ելնելով առավելապես նրանց

պահման ժամկետների վաղեմությունից եւ նրանց առողջական վիճակից:

Ռազմական գործողությունների հենց սկզբից ընդհարման մեջ գտնվող կողմերը կարող են հատուկ համաձայնագրերի միջոցով սահմանել պահման ենթակա անձնակազմի

տոկոսային հարաբերակցությունը՝ ելնելով գերիների թվաքանակից եւ ըստ ճամբարների

նրանց բաշխումից:

### ՀՐԴՎԱԾ 32

## Չեզոք Երկրների անձնակազմի վերադարձը

27 հոդվածում նշված անձինք, ընկնելով հակառակորդ կողմի ձեռքը, չեն կարող պահպել:

Հակառակ բնույթի համաձայնագրերի բացակայության դեպքում, հենց որ ուղի բացվի Նրանց Վերադարձի համար, եւ հենց որ դա թույլ տա ռազմական դրությունը,

Նրանց կլորության վիճակը կամ, եթե դա անհնար է, ընդհարման մեջ գտնվող

այն կողմի տարածքը վերադառնալ, որտեղ Նրանք ծառայության մեջ են եղել:

Իրենց ետ ուղարկելուն սպասելիս, Նրանք կշարունակեն կատարել իրենց պարտականությունները՝ հակառակորդ կողմի դեկավարությամբ. Նրանք առավելապես

կօգտագործվեն ընդհարման մեջ գտնվող այն կողմի վիրավորներին եւ հիվանդներին

ինամելու համար, որի մոտ Նրանք ծառայության մեջ են գտնվել:

Մեկնելիս Նրանք իրենց հետ կվերցնեն իրենց պատկանող իրերը, անձնական գույքը

եւ արժեքավոր առարկաները, գործիքները, գենքը եւ, եթե դա հնարավոր է, փոխադրամիջոցները:

Ընդհարման մեջ գտնվող կողմերն այդ անձնակազմի համար, քանի դեռ նա կգտնվի իրենց իշխանության տակ, կապահովեն իրենց զինված ուժերի համապատասխան անձնակազմին հատկացվող համարժեք պարենավորում, թակարանային պայմաններ, ինամբ

եւ ռոճիկներ: Իր քանակով, որակով եւ բազմազանությամբ սնունդը, համենայն դեպս,

աետք է լինի բավարար՝ ապահովելու համար նշված անձնակազմի առողջական նորմալ

վիճակը:

### Գլուխ 5 Շենքերը եւ գույքը

### ՀՐԴՎԱԾ 33 Շենքերի եւ գույքի վիճակը

Զինված ուժերի այն շարժական սանհտարական կազմավորումների գույքը, որը կընկնի հակառակորդի ձեռքը, կհատկացվի վիրավորներին եւ հիվանդներին ինամելու նպատակին:

Զինված ուժերի մշտական սանհտարական հիմնարկների շենքերը, գույքը եւ պահեստները ենթակա կմնան պատերազմի օրենքների գործողությանը, բայց չեն կարող

ուրիշ նշանակությամբ օգտագործվել, քանի դեռ դրանք հարկավոր կլինեն վիրավորներին եւ հիվանդներին: Սակայն գործող բանակի գորամասերի հրամանատարները

կարող են դրանք տևողինել ռազմական ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, նախապես

ապահովելով այն վիրավորների եւ հիվանդների վիճակը, որոնք այնտեղ բուժվում են:

Սույն հոդվածում նշված գույքը եւ պահեստները չեն կարող Ենթարկվել դիտավորյալ ոչնչացման:

### ՀՈԴՎԱԾ 34 Օգնության ընկերությունների գույքը

Օգնող այն ընկերությունների շարժական եւ անշարժ գույքը, որոնց վրա տարածվում են Կոնվենցիայով սահմանված արտոնությունները, կողմանը որպես մասնավոր սեփականություն:

Բռնագրավման՝ պատերազմի օրենքներով եւ սովորույթներով պատերազմող կողմերի համար ճանաչված իրավունքը կիրականացվի միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, այն բանից հետո, եթե վիրավորների եւ հիվանդների ճակատագիրն ապահովված կլինի:

### ԳԼՈՒԽ 6 Սանհիտարական տրանսպորտները

### ՀՈԴՎԱԾ 35 Հովանավորությունը եւ պաշտպանությունը

Վիրավորներով եւ հիվանդներով կամ սանհիտարական գույքով բեռնավորված փոխադրամիջոցները հովանավորությունից եւ պաշտպանությունից կօգտվեն նույն

հիմունքներով, ինչ շարժական սանհիտարական կազմավորումները:

Ընկերությունները ընկնում են պատերազմի օրենքների գործողության տակ պայմանով, որ դրանք գրաված՝ ընդհարման մեջ գտնվող կողմը, բոլոր դեպքերում հոգ տանի դրանց վիրավորների եւ

հիվանդների մասին:

Բռնագրավման միջոցով ձեռք բերված բոլոր տրանսպորտային միջոցները եւ քաղաքացիական անձնակազմը Ենթարկվում են միջազգային իրավունքի ընդհանուր նորմերին:

### ՀՈԴՎԱԾ 36 Սանհիտարական թռչող ապարատները

Սանհիտարական թռչող ապարատները, այսինքն՝ բացառապես վիրավորների եւ հիվանդների տարահանման, ինչպես նաև բուժանձնակազմի ու գույքի փոխադրման համար օգտագործվող ապարատները հարձակման չեն Ենթարկվի, այլ հարգանքի կարժանանան պատերազմող կողմերի կողմից այն դեպքում, եթե դրանք թռչեն շահագրգիռ պատերազմող կողմերի միջեւ կնքված համաձայնագրերով հատուկ նախատեսված բարձրությամբ,

Ժամերին եւ երթուղիներով:

Դրանք կունենան 38 հոդվածով նախատեսված պարզորոշ երեւացող տարբերանշան՝

Ներքեւի, վերեւի եւ կողքերի հարթություններում ազգային գույների հետ մեկտեղ:

Դրանք կապահովվեն ցանկացած այլ այնպիսի ազդանշանով կամ

տարբերանշանով, որոնք

սահմանվել են պատերազմի սկզբին կամ ռազմական գործողությունների ժամանակ կովող

կողմերի միջեւ կնքված համաձայնագրով:

Բացի հականիր բնույթի համաձայնագրի դեպքերից, հակառակորդի տարածքի կամ

հակառակորդի կողմից գրավված տարածքի վրայով թոհիքն արգելվում է:

Սանհիտարական թոշող ապարատները պետք է ենթարկվեն վայրեցք կատարելու մասին

ցանկացած պահանջի: Պահանջով վայրեցք կատարելու դեպքում թոշող ապարատը՝ իր

ուղեւորներով հանդերձ, կարող է շարունակել թոհիքը՝ ինարավոր ստուգումից հետո:

Յակառակորդի տարածքում կամ հակառակորդի կողմից գրավված տարածքում հարկադրական վայրեցք կատարելու դեպքում վիրավորները եւ իիվանդները, ինչպես

նաև թոշող ապարատի անձնակազմը դառնում են ռազմագերիներ:

Բուժանձնակազմի հետ

կվարվեն 24 եւ հաջորդ հոդվածների համաձայն:

### ՀՐԴՎԱԾ 37

Թոհիքը չեզոք պետությունների տարածքով: Թոշող ապարատից իշեցված վիրավորները

Ընդհարման մեջ գտնվող կողմերի սանհիտարական թոշող ապարատները կարող են

սույն հոդվածի երկրորդ պարբերության մեջ շարադրված պայմանները պահպանելով՝

թոշել չեզոք տերությունների տարածքով եւ, անհրաժեշտության դեպքում կամ միջանկյալ կանգառի համար, այստեղ վայրեցք կատարել կամ ջրի վրա իշնել: Նրանք

պետք է չեզոք տերություններին նախապես տեղյակ պահեն նրանց տարածքով իրենց

թոհիքի մասին եւ ենթարկվեն վայրեցք կատարելու կամ ջրի վրա նստելու ամեն մի պահանջի: Նրանք հարձակումից պաշտպանված կլինեն միայն այն դեպքում, եթե թոշեն

ըստ այն երթուղիների, բարձրությունների եւ այն ժամանակ, որոնք հատուկ սահմանված են ընդհարման մեջ գտնվող կողմերի եւ շահագրգիռ չեզոք տերությունների

միջեւ կնքված համաձայնագրով:

Սակայն չեզոք տերությունները կարող են սանհիտարական թոշող ապարատների՝

իրենց տարածքով թոհիք կամ վայրեցք կատարելու վերաբերյալ սահմանել պայմաններ

կամ սահմանափակումներ: Այդ ինարավոր պայմանները կամ սահմանափակումները

հավասարապես կկիրառվեն ընդհարման մեջ գտնվող բոլոր կողմերի նկատմամբ:

Տեղի իշխանության համաձայնությամբ, չեզոք տարածում սանիտարական թռչող

ապարատից իջեցված վիրավորները եւ հիվանդները, եթե չեզոք պետության եւ ընդհարման մեջ գտնվող կողմերի միջեւ չկա այլ բնույթի պայմանավորվածություն,

պետք է չեզոք պետության կողմից պահվեն այնպես, որպեսզի այն դեպքերում, երբ դա

պահանջում է միջազգային իրավունքը, նրանք չկարողանան նորից մասնակցություն

ունենալ ռազմական գործողություններին: Յոսափիտալացման եւ ներկալման ծախսերը

պետք է կատարի այն տերությունը, որին պատկանում են այդ վիրավորները եւ հիվանդները:

### Գլուխ 7 Տարբերանշանը

#### ՀՐԴՎԱԾ 38 Կոնվենցիայի տարբերանշանը

Ծվեյցարիայի նկատմամբ հարգանքից ելնելով՝ սպիտակ ֆոնի վրա կարմիր խաչի

հերալդիկ նշանը, որը կազմվում է դաշնային գույների հակառակ դասավորմամբ, պահպանվում է որպես բանակների սանիտարական ծառայության խորհրդանշան եւ

տարբերանշան:

Սակայն այն երկրների վերաբերմամբ, որոնք կարմիր խաչի փոխարեն արդեն որպես

տարբերանշան օգտագործում են սպիտակ ֆոնի վրա կարմիր կիսալուսինը կամ կարմիր

առյուծը եւ արեւը, այդ խորհրդանշանները հավասարապես թույլատրվում են սույն

Կոնվենցիայի իմաստով:

#### ՀՐԴՎԱԾ 39 Տարբերանշանի կիրառումը

Իրավասու գինվորական իշխանությունների վերահսկողության ներքո, խորհրդանշանը կպատկերվի դրոշակների, թեւկապերի եւ բոլոր այն առարկաների վրա,

որոնք վերաբերում են սանիտարական ծառայությանը:

#### ՀՐԴՎԱԾ 40 Սանիտարական եւ հոգեւոր անձնակազմի ճանաչումը

24, 26 եւ 27 հոդվածներում հիշատակված անձնակազմը ծախս թեւին կկրի խոնավությունից չի չափող տարբերանշանով թեւկապ, որը տրվում եւ կսիրով հաստատվում է գինվորական իշխանությունների կողմից:

Այդ անձնակազմը, ի լրում 16 հոդվածում նշված ճանաչման մեջալիոնների,

կունենա նաեւ տարբերանշանով՝ անձնական հատուկ վկայական: Այդ վկայականը չպետք է փշանա խոնավությունից եւ պետք է լինի այնպիսի չափերի, որպեսզի կարելի լինի այն

կրել գրպանում: Վկայականը պետք է կազմված լինի համապատասխան երկրի լեզվով, նրա

մեջ պետք է նշվեն դրա տիրոջ առևվազն ազգանունը եւ անունը, ծննդյան թիվը, կոչումը եւ գինվորական համարը, ինչպես նաեւ, թե նա ինչ կարգավիճակով սույն Կոնվենցիայի հովանավորությունից օգտվելու իրավունք ունի: Վկայականում պետք է

լինեն դրա տիրոջ լուսանկարը, ինչպես նաեւ նրա ստորագրությունը կամ մատնահետքերը, կամ՝ թե մեկը եւ թե մյուսը: Վկայականի վրա պետք է լինի գինվորական իշխանությունների ուռուցիկ կնիքը:

Անձնական վկայականները յուրաքանչյուր բանակում պետք է լինեն միատեսակ եւ,

որքան հնարավոր է, Բարձր պայմանավորվող կողմերի բոլոր բանակներում՝ միատիպ:

Ըսրիարման մեջ գտնվող կողմերը կարող են դեկավարվել այն նմուշով, որը որպես օրինակ կցված է սույն Կոնվենցիային: Ուազմական գործողությունների սկզբում նրանք

միմյանց տեղյակ կպահեն իրենց կողմից ընդունված նմուշի մասին: Ամեն մի վկայական, ըստ հնարավորին, պետք է պատրաստված լինի երկու օրինակից ոչ պակաս,

որոնցից մեկը կպահվի այն տերության կողմից, որին պատկանում է տվյալ անձը:

Ոչ մի դեպքում վերոհիշյալ անձնակազմը չի կարող գրկվել իր տարբերանշաններից

կամ վկայականներից եւ թեւկապ կրելու իրավունքից: Դրանք կորսվելու դեպքում նա

իրավունք կունենա ստանալու վկայականների եւ տարբերանշանների կրկնօրինակները:

## ՀՐԴՎԱԾ 41

### Ժամանակավոր անձնակազմի ճանաչումը

25 հոդվածում նշված անձնակազմը, միայն իր սանհիտարական պարտականությունները

կատարելու ժամանակ, կկրի սպիտակ թեւկապ՝ կենտրոնում ոչ մեծ չափի տարբերանշանով: Այդ թեւկապը պետք է տրվի գինվորական իշխանությունների կողմից

եւ հաստատվի դրանց կնիքով:

Զինվորական վկայականները, որոնք կունենա այդ անձնակազմը, կրօվանդակեն

նշում դրանց տիրոջ կողմից ստացված սանհիտարական պատրաստության, նրա պարտականությունների ժամանակավոր բնույթի, ինչպես նաեւ թեւկապ կրելու նրա

իրավունքի մասին:

## ՀՐԴՎԱԾ 42

### Կազմավորումների եւ հիմնարկների նշումը

Կոնվենցիայի տարբերիչ դրոշակը կարող է բարձրացվել այն սանհիտարական

կազմավորումների եւ հիմնարկների վրա, որոնց համար Կոնվենցիան ապահովում է

հոգածավորություն, ընդունություն, միայն գինվորական իշխանությունների համաձայնությամբ:

Շարժական կազմավորումներում, ինչպես եւ մշտական հիմնարկներում, վերոհիշյալ

դրոշակի հետ մեկտեղ, կարող է բարձրացվել ընդհարման մեջ գտնվող այն կողմի ազգային դրոշը, որին պատկանում է տվյալ կազմավորումը կամ հիմնարկը:

Սակայն հակառակորդի ձեռքն ընկած սանհիտարական կազմավորումները կրածրացնեն

միայն Կոնվենցիայի դրոշակը:

Ընդհարման մեջ գտնվող կողմերը, որքանով թույլ կտան ռազմական պահանջները,

կձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ, որպեսզի սանհիտարական կազմավորումներ եւ

հիմնարկներ ցույց տվող տարբերանշանները պարզորոշ երեւան հակառակորդի ցամաքային, օդային եւ ծովային ուժերին՝ բացառելու համար ամեն մի ագրեսիվ գործողության հնարավորություն:

### ՀՈՂՎԱԾ 43

#### Չեզոք կազմավորումների նշումը

Չեզոք երկրների այն սանհիտարական կազմավորումները, որոնց թույլատրվել է 27

հոդվածով նախատեսված ծառայություններ մատուցել պատերազմող կողմերից մեկին,

այտք է Կոնվենցիայի դրոշակի հետ միասին բարձրացնեն այդ պատերազմող կողմի

ազգային դրոշը, եթե այդ կողմն օգտվում է 42 հոդվածով իրեն տրվող իրավունքից:

Բացի այն դեպքերից, երբ գոյություն ունի համապատասխան գինվորական իշխանությունների հակադիր բնույթի հրաման, դրանք կարող են բոլոր հանգամանքներում բարձրացնել իրենց ազգային դրոշը, անգամ եթե հայտնվեն հակառակորդ կողմի իշխանության ներքո:

### ՀՈՂՎԱԾ 44

#### Տարբերանշանի օգտագործման սահմանափակումը եւ բացառությունները

Բացառությամբ սույն հոդվածի վերջին երեք պարբերություններում հիշատակված

դեպքերի, սպիտակ ֆոնի վրա՝ կարմիր խաչի խորհրդանշանը եւ "Կարմիր խաչ" ու "Ճնելի խաչ" բառերը կարող են օգտագործվել խաղաղության կամ պատերազմի ժամանակ

միայն սույն Կոնվենցիայով եւ համանման հարցերին վերաբերող մյուս միջազգային

կոնվենցիաներով պաշտպանվող սանհիտարական կազմավորումների եւ հիմնարկների,

անձնակազմի եւ նյութական մասի պաշտպանության կամ նշման համար: Նույնը վերաբերում է ևաել 38 հոդվածում (Երկրորդ պարբերություն) հիշատակված

խորհրդանշաններին՝ դրանցից օգտվող երկրների վերաբերմամբ: Կարմիր խաչի ազգային

ընկերությունները եւ 26 հոդվածում հիշատակված մյուս ընկերությունները  
իրավունք

կունենան Կոնվենցիայի հովանավորություն տրամադրող տարբերանշանից  
օգտվել միայն

այդ պարբերության դրույթների շրջանակներում:

Դրանից բացի, Կարմիր խաչի (Կարմիր մահիկի, Կարմիր առյուծի եւ արեւի)՝  
ազգային ընկերությունները խաղաղ ժամանակ, իրենց ազգային օրենսդրությանը  
համապատասխան, կարող են Կարմիր խաչի անունից եւ խորհրդանշանից  
օգտվել իրենց

այլ տեսակի գործունեության համար, որը համապատասխանում է Կարմիր խաչի  
միջազգային համաժողովների կողմից ձեւակերպված սկզբունքներին: Եթե  
գործունեության այդ տեսակներն իրականացվում են պատերազմի ժամանակ,  
ապա

խորհրդանշանից օգտվելու պայմանները պետք է լինեն այնպիսին, որպեսզի թույլ  
չտան

ենթադրել, որ խորհրդանշանը նպատակ ունի ապահովել Կոնվենցիայի  
հովանավորությունը: Խորհրդանշանը պետք է լինի համեմատաբար ոչ մեծ, եւ այն  
չի

պատկերվի թերկապերի եւ շենքերի տանիքների վրա:

Կարմիր խաչի միջազգային մարմիններին եւ դրանց կողմից պատշաճ ձեւով  
լիազորված անձնակազմին կթույլատրվի ամեն ժամանակ օգտվել սպիտակ ֆոնի  
վրա

Կարմիր խաչի նշանից:

Որպես բացառություն, ազգային օրենսդրությանը համապատասխան եւ  
Կարմիր խաչի

(Կարմիր մահիկի, Կարմիր առյուծի եւ արեւի) ազգային ընկերություններից որեւէ  
մեկի հատուկ թույլտվությամբ Կոնվենցիայի խորհրդանշանը կարող է կիրառվել  
խաղաղ

ժամանակ՝ սանիտարական փոխադրամիջոցները եւ բացառապես վիրավորներին  
ու

հիվանդներին անվճար օգնություն ցույց տալու համար նախատեսված օգնության  
կետերը

նշելու համար:

Գլուխ 8  
Կոնվենցիայի կատարումը

ՀՐՈՎԱԾ 45  
Կատարման մարդարանությունը եւ չնախատեսված դեպքերը

Ըսդհարման մեջ գտնվող յուրաքանչյուր կողմ իր գլխավոր հրամանատարների  
միջոցով պետք է հոգ տանի նախորդ հոդվածների կատարման մարդարանությունը  
մասին,  
ինչպես նաև չնախատեսված դեպքերի կապակցությամբ՝ սույն Կոնվենցիայի  
ընդհանուր  
դրույթներին համապատասխան:

ՀՐՈՎԱԾ 46  
Փոխման մարդարանությունը

Կոնվենցիայի պաշտպանության ներքո գտնվող վիրավորների, հիվանդների,

անձնակազմի, շենքերի եւ գույքի նկատմամբ փոխանշման միջոցների կիրառումն արգելվում է:

### ՀՈԴՎԱԾ 47 Կոնվենցիայի տարածումը

Բարձր պայմանավորվող կողմերը պայմանավորվում են ինչպես խաղաղ, այնպես ել պատերազմի ժամանակ հնարավորին չափ լայնորեն տարածել սույն Կոնվենցիայի տեքստով իրենց երկրներում, եւ, մասնավորապես, Կոնվենցիայի ուսումնասիրումը մտցնել ռազմական եւ, եթե հնարավոր է, քաղաքացիական կրթության ծրագրերի մեջ, որպեսզի Կոնվենցիայի սկզբունքներին ծանոթանալ առմամբ ամբողջ բնակչությունը, եւ մասնավորապես, կռվող զինված ուժերը, բուժանձնակազմը եւ հոգեւորականները:

### ՀՈԴՎԱԾ 48 Կոնվենցիայի թարգմանությունները: Կիրառման օրենքները

Բարձր պայմանավորվող կողմերը Շվեյցարիայի Դաշնային խորհրդի միջնորդությամբ, իսկ ռազմական գործողությունների ժամանակ՝ հովանավոր տերությունների միջոցով, միմյանց կիանձնեն սույն Կոնվենցիայի տեքստերի պաշտոնական թարգմանությունները, ինչպես նաև այս օրենքներն ու որոշումները, որոնք նրանք կարող են ընդունել Կոնվենցիայի կիրառումն ապահովելու նպատակով:

### Գլուխ 9 Զարաշահումների եւ խախտումների կանխումը

### ՀՈԴՎԱԾ 49 Քրեական պատիժներ: I. Ընդհանուր դրույթներ

Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորություն են ստանձնում գործողության մեջ դնել օրենսդրություն, որն անհրաժեշտ է այն անձանց քրեական արդյունավետ պատիժների ապահովման համար, ովքեր կատարել կամ հրամայել են կատարել սույն Կոնվենցիայի այս կամ այն լուրջ խախտումները, որոնք նշված են հաջորդ հոդվածում:

Յուրաքանչյուր պայմանավորվող կողմ պարտավորվում է որոնել այն անձանց, ովքեր մեղադրվում են նրանում, որ կատարել կամ հրամայել են կատարել հիշատակված լուրջ խախտումներից որեւէ մեկը եւ, ինչպիսին էլ որ լինի քաղաքացիությունը, նրանց հանձնել իր դատարանին: Նա կարող է նաև, եթե ցանկանա, եւ իր օրենսդրության դրույթներին համապատասխան, նրանց դատելու համար հանձնել մեկ այլ շահագրգիռ պայմանավորվող կողմի այն դեպքում, եթե այդ պայմանավորվող կողմն

այդ անձանց մեղադրելու համար հիմք հանդիսացող բավարար ապացույցներ ունի:

Յուրաքանչյուր պայմանավորվող կողմ, բացի հաջորդ հոդվածում թվարկված լուրջ խախտումներից, կճեռնարկի միջոցներ, որոնք անհրաժեշտ են կասեցնելու համար սույն

Կոնվենցիայի դրույթներին հակասող մյուս գործողությունները:

Բոլոր հանգամանքներում մեղադրվող անձինք կօգտվեն դատական պատշաճ ընթացակարգի երաշխիքներից եւ պաշտպանության իրավունքից, որոնք չեն կարող նվազ

Նպաստավոր լինել, քան այն երաշխիքները, որոնք նախատեսված են "Ուզմագերիների

հետ վարվելակերպի մասին" 1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնեվի կոնվենցիայի

105 եւ

հաջորդ հոդվածներով:

### ՀՐԴՎԱԾ 50 II. Լուրջ խախտումները

Նախորդ հոդվածում հիշատակված լուրջ խախտումների թվին են պատկանում այն

խախտումները, որոնք կապված են հետեւյալ գործողություններից մեկն ու մեկի հետ

այն դեպքում, եթե այդ գործողություններն ուղղված են սույն Կոնվենցիայի հովանավորությունից օգտվող անձանց կամ գույքի դեմ. կանխամտածված սպասությունը,

խոշտանգումները եւ անմարդկային վարվելակերպը, ներառյալ՝ կենսաբանական փորձերը,

կանխամտածված կերպով ծանր տառապանքի եւ լուրջ խեղման ենթարկելը, առողջությանը

վնաս հասցնելը, գույքի անօրինական, կամայական եւ մեծ չափերի հասնող ավերումը

եւ յուրացումը, որոնք չեն բխում ռազմական անհրաժեշտությունից:

### ՀՐԴՎԱԾ 51 III. Պայմանավորվող կողմերի պատասխանատվությունը

Ոչ մի պայմանավորվող կողմի թույլ չի տրվի իրեն կամ որեւէ այլ պայմանավորվող կողմի ազատել այն պատասխանատվությունից, որը նրա կամ մյուս

պայմանավորվող կողմի վրա է դրվում նախորդ հոդվածում նախատեսված խախտումների

հետեւանքով:

### ՀՐԴՎԱԾ 52 Հետաքննության ընթացակարգը

Ըստիարման մեջ գտնվող կողմերից մեկնումեկի խնդրանքով Կոնվենցիայի խախտման

մասին ցանկացած պնդման առթիվ հետաքննություն պետք է սկսվի շահագրգիռ կողմերի

միջեւ սահմանման Ենթակա ընթացակարգով:

Յետաքննության ընթացակարգի հարցում համաձայնություն ձեռք չբերելու  
դեպքում

կողմերը, փոխադարձ պայմանավորվածությամբ, ընտրում են միջնորդ դատավոր,  
որը

որոշում է ընթացակարգի հարցը:

Յենց որ խախտումը պարզվի, ընդհարման մեջ գտնվող կողմերը կկասեցնեն  
այն եւ

ինարավոր կարճ ժամկետում դրա համար պատժելու միջոցներ կձեռնարկեն:

### ՀՐԴՎԱԾ 53 Տարբերանշանի չարաշահումը

Մասնավոր անձանց, ինչպես հասարակական, այնպես էլ մասնավոր  
ընկերությունների եւ ֆիրմաների կողմից, բացի նրանցից, որոնք սույն  
Կոնվենցիայի

ուժով այդ իրավունքն ունեն, խորհրդանշանից կամ "Կարմիր խաչ" կամ "Ժնևի  
խաչ"

անվանումից կամ դրանց նմանակը ներկայացնող ամեն մի նշանից եւ ամեն մի  
անվանումից օգտվելն արգելվում է ցանկացած ժամանակ, ինչպիսին էլ որ լինի  
այդ

օգտագործման նպատակը եւ անկախ այն բանից, թե երբվանից են դիմել այդ  
օգտագործմանը:

Այն կապակցությամբ, որ ի պատիվ Շվեյցարիայի՝ դաշնային գույնների  
հակառակ

դասավորությամբ նշանի ընդունումը կարող է շփոթություն առաջացնել  
Շվեյցարիայի

գինանշանի եւ Կոնվենցիայի տարբերանշանի միջեւ, անհատ անձանց,  
ընկերությունների

կամ ֆիրմաների կողմից Շվեյցարիայի Համադաշնության գինանշանի, ինչպես  
նաև դրա

նմանակը հանդիսացող ցանկացած նշանի օգտագործումը թե որպես  
գործարանային կամ

ապրանքային նշան կամ այդ նշանների բաղկացուցիչ մասեր, թե առեւտրային  
բարեհաջությանը հակասող նպատակով եւ թե այսպիսի պայմաններում, որ  
կարող են

դիպչել Շվեյցարացիների ազգային զգացմունքներին, մշտապես արգելվում է:

Այնուամենայնիվ, այն Բարձր պայմանավորվող կողմերը, որոնք չեն  
հանդիսացել

1929 թվականի հուլիսի 27-ի ժնևի կոնվենցիայի մասնակիցներ, կարող են  
տրամադրել

նրանց, ովքեր ավելի վաղ օգտվել են առաջին պարբերության մեջ հիշատակված  
խորհրդանշաններից, անվանումներից կամ մակնիշներից, երեք տարվա  
առավելագույն

ժամկետ՝ հաշված սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու պահից, որպեսզի  
վերջիններս

դադարեցնեն դրանցից օգտվելը, ընդ որում, հասկանալի է, որ այդ ժամկետի  
ընթացքում այդ խորհրդանշաններից օգտվելը չպետք է տպավորություն թողնի,  
թե

պատերազմական ժամանակ Կոնվենցիայի հովանավորության է հավակնում:

Սույն հոդվածի առաջին պարբերությամբ սահմանված արգելքը, առանց ազդելով՝  
խորհրդանշանի նախկին գործածողների իրավունքների վրա, տարածվում է 38  
հոդվածի  
երկրորդ պարբերության մեջ նշված խորհրդանշանների եւ անվանումների վրա:

### ՀՈԴՎԱԾ 54 Չարաշահումների կանխումը եւ կասեցումը

Բարձր պայմանավորվող կողմերը, այն դեպքում, եթե նրանց գործող  
օրենսդրությունը բավարար չէ, կձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ ամեն  
ժամանակ՝

կանխելու եւ կասեցնելու համար 53 հոդվածում նշված չարաշահումները:

Եզրափակիչ դրույթներ

### ՀՈԴՎԱԾ 55 Լեզուները

Սույն Կոնվենցիան կազմված է ֆրանսերեն եւ անգլերեն լեզուներով: Երկու  
տեքստերն ել հավասարապես նույնական են:

Ըստ Հայոց ազգային խորհրդի կապահովի Կոնվենցիայի պաշտոնական  
թարգմանությունները ռուսերեն եւ իսպաներեն լեզուներով:

### ՀՈԴՎԱԾ 56 Ստորագրումը

Սույն թվով թվագրված սույն Կոնվենցիան միևնույն 1950 թվականի փետրվարի  
12-ը  
կարող է ստորագրվել 1949 թվականի ապրիլի 21-ին Ժնեվում բացված  
համաժողովին  
Ներկայացված բոլոր տերությունների, ինչպես նաև այն տերությունների կողմից,  
որոնք թե՛ւ չեն ներկայացվել այդ համաժողովում, սակայն եղել են "Գործող  
բանակներում վիրավորների եւ հիվանդների վիճակի բարելավման մասին" Ժնեվի  
1864,  
1906 կամ 1929 թվականների համաժողովների մասնակիցներ:

### ՀՈԴՎԱԾ 57 Վավերացումը

Սույն Կոնվենցիան կվավերացվի ինարավորին չափ արագ, եւ վավերագրերն ի  
պահ  
կհանձնվեն Բեռնում:  
Յուրաքանչյուր վավերագրի հանձնման մասին կկազմվի արձանագրություն,  
որի  
հաստատված պատճենը Ըստ Հայոց ազգային Դաշնային խորհրդի կողմից կհանձնվի  
բոլոր այն  
տերություններին, որոնց անունից կստորագրվի Կոնվենցիան կամ դրան  
միանալու  
մասին հայտարարություն կարվի:

### **ՀՐԴՎԱԾ 58 ՈՒԺԻ ՄԵԶ ՄՏՆԵԼԸ**

Սույն Կոնվենցիան ուժի մեջ կմտնի վեց ամիս անց այն բանից հետո, եթք առևկազն երկու վավերագիր ի պահ կհանձնվի:

Հետագայում Կոնվենցիան յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմի համար

ուժի մեջ կմտնի նրա վավերագիրն ի պահ տալուց հետո վեց ամիս անց:

### **ՀՐԴՎԱԾ 59 Առևությունը նախորդ կոնվենցիաների հետ**

Սույն Կոնվենցիան Բարձր պայմանավորվող կողմերի միջեւ հարաբերություններում իրենով փոխարինում է 1864 թվականի օգոստոսի 22-ի, 1906 թվականի հուլիսի 6-ի եւ

1929 թվականի հուլիսի 27-ի կոնվենցիաները:

### **ՀՐԴՎԱԾ 60 Միացումը**

Ուժի մեջ մտնելու օրից սույն Կոնվենցիան բաց կլինի դրան միանալու համար ամեն մի տերության առջեւ, որի անունից այս Կոնվենցիան չի ստորագրվել:

### **ՀՐԴՎԱԾ 61 Միանալու մասին ծանուցումը**

Յուրաքանչյուր միանալու մասին գրավոր կիայտնվի Շվեյցարիայի Դաշնային խորհրդին, եւ միանալը ուժի մեջ կմտնի վերջինիս կողմից այդ հայտարարությունն ստանալու օրից վեց ամիս հետո:

Շվեյցարիայի Դաշնային խորհրդինը միանալու մասին կիաղորդի այն տերություններին, որոնց անունից ստորագրվել է Կոնվենցիան կամ միանալու մասին հայտարարություն է արվել:

### **ՀՐԴՎԱԾ 62 Անմիջապես ուժի մեջ դնելը**

2 եւ 3 հոդվածներում նախատեսված դեպքերն անմիջապես ուժի մեջ կդնեն ի պահ

տրված վավերագրերը, ինչպես նաև միանալու հայտարարությունները, որոնց մասին

ընդհարման մեջ գտնվող պետությունների կողմից կիայտնվի մինչեւ ռազմական գործողություններն սկսվելը կամ գրավումը կամ դրանից հետո: Շվեյցարիայի Դաշնային խորհրդին ամենաարագ կերպով կիաղորդի ընդհարման մեջ գտնվող կողմերից

ստացված վավերացումների կամ միանալու մասին:

### **ՀՐԴՎԱԾ 63 Չեղյալ հայտարարելը**

Բարձր պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը հնարավորություն կունենա  
չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան:

Չեղյալ հայտարարելու մասին պետք է գրավոր հայտնվի Շվեյցարիայի  
Դաշնային  
խորհրդին, որև այդ մասին կիաղորդի բոլոր Բարձր պայմանավորվող կողմերի  
կառավարություններին:

Չեղյալ հայտարարվելը ուժի մեջ կմտնի միայն Շվեյցարիայի Դաշնային  
խորհրդին  
արված հայտարարությունից մեկ տարի անց: Սակայն, չեղյալ հայտարարվելը,  
որի  
մասին հայտարարությունն արվել է այն ժամանակ, երբ չեղյալ հայտարարող  
տերությունը մասնակցելիս է եղել ընդհարմանը, չի կարող ուժ ունենալ մինչեւ  
հաշտություն կնքելը եւ, համենայնդեպս, մինչեւ այն ժամանակը, քանի դեռ չեն  
ավարտվել սույն Կոնվենցիայի հովանավորությունից օգտվող անձանց ազատման  
եւ

հայրենադարձության գործողությունները:

Չեղյալ հայտարարվելն ուժ կունենա միայն չեղյալ հայտարարող տերության  
վերաբերմամբ: Այս ոչ մի կերպ չի կարող ազդել այն պարտավորությունների վրա,  
որոնք ընդհարման մեջ գտնվող կողմերը պարտավոր կլինեն շարունակելու  
կատարել

Միջազգային իրավունքի սկզբունքների ուժով, քանի որ դրանք բխում են  
քաղաքակիրթ  
ժողովուրդների միջեւ սահմանված սովորութեաներից, մարդասիրության  
օրենքներից եւ  
հանրային խղճի հրամայականից:

#### ՀՐԴՎԱԾ 64

Գրանցումը Միավորված ազգերի կազմակերպությունում

Շվեյցարիայի Դաշնային խորհուրդը սույն Կոնվենցիան կգրանցի Միավորված  
ազգերի կազմակերպության քարտուղարությունում: Շվեյցարիայի Դաշնային  
խորհուրդը

Միավորված ազգերի կազմակերպությանը կիաղորդի նաեւ այն բոլոր  
վավերացումների,

միանալու եւ չեղյալ հայտարարելու մասին, որոնք սույն Կոնվենցիայի  
կապակցությամբ կստացվեն:

Ի հավաստում որի, համապատասխան լիազորություններ ներկայացնելով,  
ներքոստորագյալները ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Ժնևում 1949 թվականի օգոստոսի 12-ին՝ ֆրանսերեն եւ  
անգլերեն

լեզուներով: Սույն Կոնվենցիայի բնօրինակը կպահվի Շվեյցարիայի  
Համադաշնության

արխիվներում: Շվեյցարիայի Դաշնային խորհուրդը Կոնվենցիայի հաստատված  
պատճենները կհանձնի Կոնվենցիան ստորագրած կամ դրան միացած  
յուրաքանչյուր  
պետության:

**ԿՈՆՎԵՆՑԻԱ  
ԳՈՐԾՈՂ ԲԱԼԱԿԱՆԵՐՈՒՄ ՎԻՐԱՎՈՐՄԵՐԻ ԵՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՎԻճԱԿԻ  
ԲԱՐԵԼԱՎԱՄԱՆ**

**ՄԱՍԻՆ  
(2-րդ մաս)**

**ՀԱՎԵԼՎԱԾ**

Սանհիտարական գոտիների եւ վայրերի մասին համաձայնագրի նախագիծ

**ՀՈԴՎԱԾ 1**

Սանհիտարական գոտիները նախատեսվում են բացառապես այն անձանց համար, որոնք հիշատակված են "Գործող բանակներում վիրավորների եւ իիվանդների վիճակի բարելավման մասին" 1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնեվի կոնվենցիայի 23 հոդվածում, ինչպես նաև այն անձնակազմի համար, որի վրա է դրված այդ գոտիների եւ վայրերի կազմակերպումը, դրանց կառավարումը եւ այն անձանց խնամքը, որոնք կկենտրոնացվեն այնտեղ:

Սակայն այդպիսի գոտիների տարածքում մշտապես բնակվող անձինք իրավունք կունենան գտնվել այդ գոտիներում:

**ՀՈԴՎԱԾ 2**

Ոչ մի անձ, ինչ հիմքով էլ գտնվելիս լինի սանհիտարական գոտիներից որեւէ մեկում, ինչպես այդ գոտու ներսում, այնպես էլ դրանց դուրս, չպետք է զբաղվի ոչ մի այնպիսի աշխատանքով, որն ուղղակի առնչություն ունի ռազմական գործողությունների եւ ռազմական նյութերի արտադրության հետ:

**ՀՈԴՎԱԾ 3**

Սանհիտարական գոտի ստեղծած տերությունը կծեռնարկի բոլոր հարկ եղած միջոցները, որպեսզի արգելի բոլոր այն անձանց մուտքը այդ գոտու տարածք, որոնք այդ գոտին այցելելու կամ այնտեղ գտնվելու իրավունք չունեն:

**ՀՈԴՎԱԾ 4**

Սանհիտարական գոտիները պետք է համապատասխանեն հետեւյալ պայմաններին.

ա) պետք է զբաղեցնեն դրանք ստեղծած տերության կողմից վերահսկվող տարածքի  
մի փոքր մասը միայն,

բ) այն բնակչության թվաքանակի համեմատությամբ, որ դրանք կարող են տեղափորել, պետք է լինեն թույլ բնակեցված,

գ) դրանք պետք է հեռու գտնվեն ամեն տեսակի ռազմական օբյեկտներից եւ արդյունաբերական կամ վարչական խոշոր հիմնարկներից, ինչպես նաև չունենան

այդպիսիք,

դ) դրանք չպետք է գտնվեն այն շրջաններում, որոնք ամենայն հավանականությամբ, պատերազմ վարելու համար կարող են նշանակություն ունենալ:

### ՀՈԴՎԱԾ 5

Սանհիտարական գոտիներին ներկայացվում են հետեւյալ պահանջները.

ա) հաղորդակցության ուղիները եւ փոխադրամիջոցները, որոնք կարող են լինել այդ գոտիներում, չպետք է օգտագործվեն զորքերի կամ ռազմական նյութերի տեղափոխման համար, անգամ տարանցիկ ձեւով,

բ) ոչ մի հանգամանքներում դրանք ռազմական միջոցներով չպետք է պաշտպանվեն:

### ՀՈԴՎԱԾ 6

Սանհիտարական գոտիները կնշվեն սպիտակ ֆոնի վրա կարմիր խաչով (կարմիր մահիկով, կարմիր առյուծով եւ արեւով), որը կտեղավորվի գոտու ծայրամասերում եւ

կառուցյների վրա:

Գիշերը դրանք կարող են նշվել այդ նույն ձեւով՝ համապատասխան լուսավորության օգնությամբ:

### ՀՈԴՎԱԾ 7

Խաղաղ ժամանակ կամ ռազմական գործողությունների սկզբին յուրաքանչյուր տերություն բոլոր Բարձր պայմանավորվող կողմերին կհաղորդի իր կողմից վերահսկվող

տարածքում հիմնված սանհիտարական գոտիների ցուցակը: Նա պետք է նրանց հաղորդի

Նաեւ ընդհարման ընթացքում ստեղծված յուրաքանչյուր նոր գոտու մասին:

Յակառակորդ կողմից վերոհիշյալ հաղորդումն ստանալու պահից գոտին հանդիսանում է իրավապես գոյություն ունեցող:

Սակայն, եթե հակառակ կողմը համարի, որ սույն համաձայնագրի պայմաններից

որեւէ մեկը բացահայտորեն չի կատարվել, նա կարող է հրաժարվել գոտին ճանաչելուց՝

իր հրաժարման մասին շուտափույթ հայտնելով այն կողմին, որի տևորինության տակ է

գտնվում այդ գոտին, կամ, իր կողմից դրա ճանաչումը պայմանավորել 8 հոդվածով

Նախատեսված վերահսկողություն սահմանելով:

### ՀՈԴՎԱԾ 8

Յակառակորդ կողմի հիմնած մեկ կամ մի քանի սանիտարական գոտի ճանաչած յուրաքանչյուր տերություն իրավունք կունենա պահանջելու, որպեսզի մեկ կամ մի քանի հատուկ հանձնաժողովներ ստուգեն, թե այդ գոտիները համապատասխանո՞ւմ են սույն համաձայնագրի մեջ շարադրված պայմաններին եւ պահանջներին:

Դրա համար հատուկ հանձնաժողովների անդամները ցանկացած ժամանակ ազատ մուտք կունենան տարբեր գոտիներ եւ նույնիսկ կարող են այնտեղ մշտապես բնակվել: Նրանց համար կստեղծվեն բոլոր պայմանները, որպեսզի նրանք կարողանան կատարել վերահսկողության իրականացման իրենց պարտականությունները:

### ՀՐԴՎԱԾ 9

Այն դեպքում, եթե հատուկ հանձնաժողովներն արձանագրեն փաստեր, որոնք նրանց կարծիքով հակասում են սույն համաձայնագրի պայմաններին, նրանք պետք է այդ մասին անմիջապես հայտնեն այն տերությանը, որի տևորինության տակ է գտնվում գոտին, եւ նրան տան ամենաշատը հնգօրյա ժամկետ՝ խնդիրը կարգավորելու համար. Նրանք այդ մասին կհայտնեն գոտին ճանաչած տերությանը:

Եթե այդ ժամկետի ավարտին տերությունը, որի տևորինության տակ է գտնվում գոտին, միջոցներ չձեռնարկի իրեն հասցեագրված զգուշացման առթիվ, ապա հակառակորդ կողմը կարող է հայտարարել, որ ինքն այդ գոտու վերաբերմամբ այլեւս կապված չէ սույն համաձայնագրով:

### ՀՐԴՎԱԾ 10

Մեկ կամ մի քանի սանիտարական գոտիներ եւ վայրեր ստեղծած տերությունը, ինչպես նաև հակառակորդ կողմերը, որոնց կիայտնվի այդպիսի գոտիների գոյության մասին, կնշանակեն կամ չեզոք տերություններին կիսնդրեն նշանակել անձանց, որոնք կարող են մտնել 8 եւ 9 հոդվածներում հիշատակված հատուկ հանձնաժողովների կազմի մեջ:

### ՀՐԴՎԱԾ 11

Ոչ մի հանգամանքներում սանիտարական գոտիները չեն կարող ենթարկվել հարձակման, դրանք մշտապես կօգտվեն ընդհարման մեջ գտնվող կողմերի հովանավորությունից եւ հարգանքից:

### ՀՐԴՎԱԾ 12

Որեւէ տարածքի գրավման դեպքում այնտեղ գտնվող սանհիտարական գոտիները պետք են

առաջվա պես օգտվեն հարգանքից եւ օգտագործվեն որպես այդպիսիք:

Սակայն, գրավող տերությունը կարող է փոխել դրանց նշանակությունը՝ նախապես

ապահովելով դրանցում տեղավորված անձանց ճակատագիրը:

### ՀՐԴՎԱԾ 13

Սույն համաձայնագիրը կկիրառվի նաեւ այն վայրերի նկատմամբ, որոնք տերությունների կողմից կօգտագործվեն այն նույն նպատակների համար, ինչ որ սանհիտարական գոտիները:

### ՀԱՎԵԼՎԱԾ 2

Անձնական վկայականի ձեւը

Երեսի կողմը

---

(այն երկրի եւ զինվորական իշխանությունների անվան տեղը, որոնք տվել են վկայականը)

ԱՆՁՆԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

լզինված ուժերին կցված սանհիտարական եւ հոգեւոր անձնակազմի անդամների համար

Ազգանուն  
Անուն  
Ծննդյան թիվը  
Կոչումը  
Զորային համարը  
Սույն ինքնության վկայականի տերը պաշտպանված է գործող բանակներում

լվիրավորների եւ հիվանդների վիճակի բարելավման մասին 1949 թ. օգոստոսի 12-ի

Ժնեվի կոնվենցիայով որպես  
Տրված է

Վկայականի N

---

Հակառակ երեսը

---

|| | |

Վկայականի տիրոջ լուսանկարը      Վկայականի տիրոջ ստորագրությունը |  
կամ բութ մատի մատնահետքը եւ կամ |  
երկուսն ել |

Վկայական տված զինվորական իշխանությունների ցցուն կնիքը |

Յասակը                  Աչքերը                  Մագերը |

Մյուս բնորոշ նշանները |

---

\* Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի դեկտեմբերի 7-ից: